

Վերջապահելով մեր խօսքը՝ կրկին և կրկին անգամ կրօնական և քաղաքական ժողովոց ուշադրութիւնն կը հրաւիրեմք սոյն կետին վերայ, և կը խնդրեմք անտես չ'առնել այս կենսական խնդիրն. այլ մի առ մի ցուցակագրել, թէ քանի՞ եպիսկոպոսութիւն կան ազգին մէջ, ո՞րք ծերութեամբ անձնաւորն հասնի վիճակաւորութեան, ո՞րք արտաքսուած են վիճակաւորութենէ իրենց թերութեանց համար, ո՞րք տակաւին վիճակներն կը խռովեն առաջնորդութեան համար, և ո՞րք քարոզչութիւն մի պատրուակելով՝ կը խռուսեն վիճակաւորութենէ:

Այս ամենն անաշուտապէս 'ի հաշիւ առնելով պարտաւոր է անշուշտ Աղգային Վարչութիւնն բոլոր անդործ և անսլաշոն եպիսկոպոսներն կամ վիճակաւոր կացուցանել, եթէ ձեռքն հաս և արժանաւոր են, և կամ Հայաստանի վանօրէից մէջ զետեղել, որպէս զի պարագործութենէ յառաջ եկած չարիքներն վերնան Աղգին մէջէն, և եկեղեցականութիւնն ազատի սոյն կըշտամբանքներէն, որոյ ենթակայ է յարաժամ:

Մ. Ս. Յ.

«Իշխան վր իւր միակ ամսին պատաւ խանաւորուն չէ. այլ նաեւ, նպատակաց ամեն միոյն »:

Հետեւեալ համառօտ խորհրդաւորութիւնը կրնայ փոքր ինչ այն ամեն անձանց ուշադրութեան արժանի համարուիլ, որոնք մեծ կամ սղօթիկ հոգեւոր կամ մարմնաւոր կառավարութեան մը գլուխ անցած՝ մարդկանց վր

րայ հակելու ծանր պարտաւորութիւն իրենց վրայ ստանձնած են յ'ստուծոյ:

Հատ խօսուած և շատ գրքեր յօրինուած է իշխանի մը պարտուց և իրաւանց վրայ, ուստի հոս իմ նպատակը այսպիսի բնդարձակ նիւթի մը վրայ ծառել չէ, որ շատ թերթերու կը կարօտի, և ո՛չ ալ իշխանի մը արդարասիրութեան վրայ բնդհանրապէս խօսիլ է միտքս, այլ միայն գրաւոր աննշան կարծուած բայց խիստ կարեւոր կէտ մը կը կամիմ բացատրել, այս սինքն իշխանի մը արդարասիրութիւնը մինչեւ որ աստիճան հասնելու պէտքը ցուցանել:

Իտրեացական՝ և արդարասէր իշխան մը անշուշտ իւր հպատակաց, այսինքն իւր իշխանութեան տակ զրօնուող մարդկային խումբին բարօրութիւնը, յառաջադիմութիւնը և երջանկութիւնը կը կամի քանզի արդարութեան և բարոյական հաւասարութեան պահանջն է այս: Այս կը բաղձայ, կը ճքնի, որ իր օրով սկսի անոնց համար երջանիկ և յիշատակաց արժանի թուական մը, որով իւր անուընդ անմուռաց և կենդանի մնաց նոցա սերնդեան սրտից մէջ, նա իր կողմանէ շատ մը զոհողութիւններ ալ կրնէ սոյն բաւձալի նպատակին հասնելու: () Իննակի համար գիշեր ցերեկ անբուն կը մնայ, կ'աշխատի մարտի և մարմնով, մինչդեռ մարդկային փառաւորութիւնը, կամ աւելի ճիշդ բանք ին նախնութիւնը կը թերագրէր զինքը ձեռքը ունեցած իշխանութեան զօրութիւնն ու պերճութիւնը իւր անձին վրայ կենդրոնացնել: Այս արդարասէր իշխանը՝ բնդ հակառակն շարունակ իր ժողովրդեան կենաց վրայ կը խոսի, խօսակցութիւնն ու գործքերն ալ բաւական կը հաստատեն որ նորա միակ փափաքը իւր ստորակար-

գէլոյ՝ իւր եղբարց հանգիստն է։ Բայց
ահա կատարելու պէս չը կրնար ժա-
մանել այսպիսի վեհ նպատակի մը։
Պատճառը։— Ամենի տակաւին պարտք
մը ալ ունի կոտորելիք, այն է իր
անձէն դուրս ելնել և դիտել մէյմը
Թէ՛ իր ժողովրդեան վրայ կարգած
պաշտօնեայքը կամ տեսուչքը եւս իր
հոգւովը կը վարուին խեղճ հպատա-
կաց հետ Թէ՛ անիրաւութեամբ եւ
զրկողութեամբ։ Ասկէց կը հետեւի
Թէ՛ իշխան մը իւր բոլոր պարտքերը
կատարած չըլլար, երբ միայն անձամբ
չը զրկեր իւր ժողովուրդը, այլ իւր
պաշտօնէից միջոցաւ, Թէ՛ պէտ և ինքը
Թերեւս անբոլոր եղած զրկանաց, Թէ՛
Թերի է իւր արգարաւորութիւնը,
երբ իւր անձէն դուրս ամեն ուրեք
ուր որ իւր իշխանութիւնը կ'ազդէ,
չը տարածեր արգարութեան գաւա-
զանը, եթէ գիտէ զայն, քանզի « Իշ-
խան մը իւր միակ անձին պատասխա-
նատուն չէ, այլ նա եւ իւր հպատա-
կաց ամեն միոյն »։

Ի՞նչ կը լինէր աշխարհիս վիճակը,
եթէ արգարասէրն Աստուած, որ բո-
լոր մարդկային բնութեան իշխանն է,
իւր կատարեալ և անթերի արգարա-
սիրութեամբը չստիպէր զաշխարհ, որ
միմեանց հետ արգարութեամբ վա-
րուին, սահմանելով վարձ՝ լսողին, պա-
տիժ՝ չը լսողին։ Այս ապաքէն այս ան-
յեղին սկզբունքն էր, զոր քարոզեց Յի-
սուս աշխարհի վրայ, երբ յառաջ բե-
րաւ այն առակը, յոր ակներեւ կը
տեսնենք որ իշխանը իւր պարտապան
ծառային շնորհ ընելէն զինի, կ'ստի-
պէ զծառայն եւս զի և նա շնորհ ընէ
իւր ծառայակցին։ Եթէ պարտք է
իշխանին ստիպել շնորհ ընելու, ո՞ր-
քան եւս առաւել ստիպել չի զրկելու։
Կրտսերեալ արգարասիրութիւնը այս
կէտին մէջ կը կայանայ։

Իշխանը այս կէտին դործագրու-
թեամբ խողովորութիւնը իւր հպա-
տակաց մէջ կը Թագաւորեցնէ ըստ
իւր բաղձանաց, խաղաղութիւն, որ ա-
մենակարեւոր է, մարդոյ Թէ՛ իւր հոգ-
ւոյն և Թէ՛ իւր մարմնոյն հանգստու-
թեան համար, և որ աղբիւր է ամէն
բարեաց, ինչպէս որ խռովութիւնը
աղբիւր է բոլոր չարեաց։

Հպատակաց ապստամբութիւնը
ոչ միշտ իշխանի մը բռնութենէն կը
ծագի, այլ շատ անգամ նորա անիրաւ,
ագահ և սամարդի պաշտօնէից մըն ըն-
թացքէն, նոցա դաժան և անհամ-
բոյր բնաստրութենէն և վերջապէս
նոցա հայհոյիչ, պիղծ և խոցոտիչ լեզ-
ուէն, որ սայրասուր ժողովի պէս կա-
րելէր կը խոցէ նոյն հաւատարիմ սրբ-
տեւրը, որք իշխանին բարերարու-
թեանց յիշատակաւը կը բաբախեն,
և որք չեն կարող սակայն ժողովալ այս-
պիսի երկրորդական և վատ բռնաւո-
րաց անտանելի լծոյն, բռնաւորներ,
որ կրցած են միանգամ իրենց օձային
խորամանկութեամբ շահել բարեսիրտ
իշխանին դիւրահաւան սիրտը։ Բան-
զի այսպիսի ապականեալ պաշտօնեայ
մը միշտ իշխանութեան շահը պաշտ-
պանելու պատրուակու կը գործէ.
խեղճ իշխանը իր շահը ապահովուած
տեսնելով՝ եւս առաւել կը յարի ա-
պահովիչ պաշտօնէին, չը մտածէր որ
այսպիսի անարժան և անմարդավայել
միջոցներով կը պաշտպանուի այն շահը,
որուն եթէ տեղեակ ըլլար կամ գոնէ,
այսպէս ըսենք, վայրկեան մը ականա-
տես ըլլար, սոսկումով ետ պիտի քաշ-
ուէր սոյն պաշտօնէին և անոր տեսու-
թեան անգամ չը պիտի կրնար հան-
դուրժել այլ եւս, և անոր սոյն վայր-
կենէն յաւիտեան պաշտօնէ դադա-
րումը անհրաժեշտ պիտի սեպէր.
Քանզի պիտի իմանար որ ժողովրդեան

դժգոհութիւնը հազիւ այսպիսի արդարադատ գործով մը կարելի է դադրեցնել. քանզի պիտի տեսնէր որ այդ մասնաւոր շահերը, զորս նոյն անիրաւ պաշտօնէին միջոցաւ կ'ստանար, ժողովրդեան շահուց կը հակառակին, հետեւապէս և իր ճշմարիտ և բուն շահերը չեն կրնար բլբլ, իրեն՝ որ այն քան ժողովրդեան յառաջագիմութեան և բարօրութեան իսկապէս կը բաղձայ:

Լստուածաձնջին մէջ խիստ ցուաւր օրինակ մը կը կարդանք որ պինտ մօտէն այս խնդիրը կը շօշափէ: Հեղինայն ճերուռազարդ և պատկառելի քահանայն, անշուշտ կատարեալ անձ մ'էր, և ժողովրդեան բարիքը կը կամէր անտարակոյս, բայց ահա իւր այս մարդկային կատարելութեան մէջ անգամ թերութիւն մը ունեցաւ, և այս մէկ թերութեան համար սոսկալի պատժոյ մը ենթակայ եղաւ: Ի՞նչ էր այս թերութիւնը. — իրեն երկու որդւոց անիրաւ և բռնական ընթացից վրայ ներողամիտ աչօք հայկը: Սակայն կարելի է ըսել որ Լստուած յանցանաց համեմատ չը չափեց պատուհասը: Քաւ լիցի: Քանզի հեղինն որդիքը՝ իրենց դայթակղելի վարուքը ժողովրդեան բարոյական կեանքը կը սպաննէին, և այն սոսկալի սճիրը անուղղակի կերպով իրենց հօրը վրայ կ'ընար, քանզի իշխողութիւն կընէր անոնց:

Ուրեմն ո՞վ իշխանք, առ ձեզ են խօսքերս, մտածեցէք վայրկեան մը թէ սոյնպիսի դատապարտելի իշխողութիւն մ'ալ դուք չէք ըներ ձեր երկրորդական պաշտօնէից, որոնք իրենց չոր և մոլի վարուքը հաղաթաւորները կը դայթակղեցնեն, և ձեր ժողովրդեան փափաքելի խաղաղութիւնն ու երջանկս թին կը վրդովնեն, ձեզմէ պիտի պահանջուի անոնց հասուցած ամեն չարեաց հաշիւը յաստուածակոյս կողմ

մանէ. քանզի դուք, իշխող ժողովրդեան, «Դուք ձեր միակ անձանց պատասխանատուքը չէք. այլ նաեւ ձեր հպատակաց ամեն միոյն»:

Մ. Վ. Ս.

ԶԳԵՂԵՑԿՈՒԹԵՆԷ ԳՐՈՑ ՍՐԲՈՑ

Ս. Գիրք պարզութեամբ, ուժգընութեամբ և ճիշտութեամբ գեր ՚ի վերոյ է քան զամենայն մատենագիրս Հռովմայ և Յունաստանի: Հոմեր իսկ ոչ ժամանեաց վսեմութեան օրհնութեանցն Սոփիսի, վերջնոյն մանաւանդ, զոր ՚ի բերան ուսանիլ պարտ էին համայն մանկունք Իսրայելի: Ոչ մի ներբողեան յունական կամ լատինական կարաց հասանել բարձրութեան Սաղմոսաց, զոր օրինակ այն որոյ ըսկիզբն է այսպէս. «Լստուած աստուծոց, Տէր խօսեցաւ և կոչեաց զերկիր», անդր քան զսահման երեւակայութեանս անցանէ: Ոչ Հոմեր և ոչ այլ որ ՚ի բանաստեղծից հաւասարեցաւ Նաայեայ նկարագրողի զիառս Լստուծոյ, յաչս որոյ «Ժառագորութիւնք իբրեւ հատ աւաղոյ, տիեզերք իբրեւ վրան՝ կանգնեալ այսօր և բարձեալ վաղիւ»: Ի զի ունի մարգարէս բղբաղցրութիւն և զգգուանս տուարածականի ՚ի զուարթագին նկարագիրս իւր վստաղաղութենէ, և է զի բարձրանայ մինչեւ թողուլ զամենայն ՚ի ստորեւ: Իայց իցէ ինչ, ՚ի հեթանոսական հնութեան բաղդատելի ընդ եղերականն Նրեմիայ աշխարողի զաղետնս ժողովրդեան իւրոյ, կամ Նաումայ, որ ՚ի բացուստ տեսանէր հողաւով զանկուսն բարձրութեւն Նինուէի